






ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ




Երկրորդ տարի † Մայիս 26/8 Յունիս † Թիւ 46

ԶՔՆԱՂ ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ս. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՅԻՈՅ

Ի ՓԱՌՍ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ



(Շարունակութիւն եւ վերջ)

Այն ատեն սլանալով ամենակար զօրութիւնը, փրկական առաւ-
տու թիւնը, հեղութեան աղբիւրը, մարդասէր շնորհը, հեղու մը Աստուծոյ
առատութեան, կենդանարար բխումը մարգարէներէ քարոզուած, անեղ
որոտմամբ կ'անցէր հոգեղէններու լէզէոններու մէջէն, այնպէս որ երկ-
նաւոր զօրաց գունդերը ապշած սոսկմահար մնացին: Զի, ան՝ որ մի-
այն ընդ աղօտ տեսնել կը փափաքէին, այժմ տեսան որ իր իսկական է-
ութեամբ կը դիմէր դէպ ի մարդկային աղզը ու կը սփռէր անոնց վրայ:
Ինչու որ Սուրբ Հոգւոյն ամբողջ անձնութիւնը այսօր իջաւ առա-
քելական գունդի դասին մէջ՝ ճիշդ ինչպէս Միածինը իջած էր Կոյսին

արգանդը : Եւ անգամ մ'որ եկաւ՝ ա'լ չհեռացաւ ու մնաց Բրիստոսի եկեղեցւոյն մէջ՝ իր փեսային անսուտ խոտման համաձայն որ կ'ըսէ , Ձեզ հետ պիտի բնակի ու ձեր քով պիտի մնայ յաւիտեան : Այսօր , առ զօրացուց առաքեալներն ու անոնց միջնորդութեամբ ալ ընդհանուր տիեզերքը : Զի , Հոգին ալ արտափոյթ յարեցաւ մարդկային փրկութեան գործոյն , ուստի և անոնց հետ կեցաւ ու անոնց մէջ ընտելեցաւ : Այս իսկ պատճառաւ , Պետրոս իր մէջ Հոգին կրելուն համար , Անանիայի ստելը ոչ թէ մարդկանց հանդէպ եղած կը նկատէր՝ այլ Աստուծոյ : Ինչո՞ւ կ'ըսէ , զիս խաբել ուզելով խորհեցաք Աստուծոյ Հոգին փորձելու . ո՛չ թէ մարդոց ստեղծեալ դուք՝ այլ Աստուծոյ : Ասոր չնորձ՝ առաքելոց վրայ ձեռքերը դրած պահուն , հանդէպաւ Ստեփանոսի վրայ . որնոր իսկոյն զօրանալով սկսաւ նշաններ ու մեծամեծ հրաշքներ ընել : Եւ իրօք , առ՝ եկեղեցւոյ թագաւորի մը պէս , կ'որոշէր Պօլոսն ու Բառնաբաբը իր բանին քարոզութեան համար : Աս՝ ոմանք առաքելական պաշտօնին ընտրեց , ոմանք մարգարէանալու , ուրիշներ՝ հովուելու և վարդապետելու : Ինչպէս , Մատթիայի վիճակեցաւ առաքելական պաշտօնը , և Ագաթիայի ու Տիմոթիոսի՝ մարգարէական պարգեւը , Եփեսոսի Եկեղեցւոյ երէցներուն ալ հովութեան ու վարդապետութեան չնորձ : Զգոյշ եղէք , կ'ըսէ այդ հօտին որուն համար Սուրբ Հոգին ձեզ սեսուէ ու վարդապետ կարգեց : Ասի նիւթեղէն լեզուներու համարձակութիւն տուաւ Հայր կանչելու զԱստուծո՝ որ անմարմին էակներու հրեղէն կառքին մէջ կը նստի : Զի , մենք որդեգրութեան Հոգին առինք , որով կ'աղաղակենք՝ արքայ , Հայր : Նոյն ինքն Հոգին անգամ կը վկայէ մեր հոգւոյն՝ թէ մենք Աստուծոյ որդիներ ենք : Ասի՝ մէկուն կու տայ իմաստութեան բանը , ուրիշի մը՝ գիտութեան բանը , ուրիշի մը հաւատք՝ լեռները տեղափոխելու , ուրիշի մը զօրութիւն՝ սքանչելի գործեր կատարելու : Ասի կ'օժէ մեր սրտերը , Յովհաննու ըսածին համաձայն , ու կ'ընէ քրիստոնեայ և Բրիստոսընկալ . և այս օծութիւնէն կը զօրանանք ամէն ինչ գիտնալու համար : Ասի կը լուսաւորէ մեր մտաց աչերը՝ ճանչնալու մեր կոչման յոյսը և մեր ժառանգելիք՝ փառաց մեծութիւնն ու Բրիստոսի սիրոյն լայնածաւալ խորութիւնը : Ասոր համար մենք արհամարհեցինք աշխարհային բաները և աներեւոյթ բաներուն կը փափաքինք : Եւ այս Հոգւով մեր մէջ ընտելելով Բրիստոս մեզոց մարմնոյ զգայնութիւնը , այս է՝ մեզաց հեշտանքը , ու կենդանացուց մեր բանական հոգին արդարութեան խորհրդոց յուսովը : Որով մարդիկ զօրացած սանակոխ ըրին նեղութիւն , հալածանք , սով , սուր , ներկայ և ապագայ ամէն արգելք , Հոգւոյն զօրութեամբ պայծառանալով Բրիստոսի սիրոյն զխտութեան մէջ : Ասի որ կը քննէ Աստուծոյ խորքերը , կը քննէ նաեւ մարդկանց սրտերը , և տեսնելով մեր բնութեան տկարութիւնը , իսկոյն օգնութեան կը փութայ և էնմուռնչ հեծեծանօք բարեխօս կ'ըլլայ Աստուծոյ քով եկեղեցւոյ հա-

մար: Ու միշտ ամէն բարի գործքերու մէջ կը գործակցի անոնց որ զԱստուած կը սիրեն: Ամէնուն ալ փրկութիւնը կ'ուզէ, ամէնուն ալ հաւատքին կ'սպասէ, որպէս զի նուիրած պահուն՝ սերմանէ անոնց մէջ հաւատոյ շնորհներն ու հոգեւոր զօրութիւնները: Կ'ուզե՞ս գիտնալ անոր մարդկանց հանդէպ ունեցած սիրոյն չափը, հետեւէ՛ ներքինին կտուքին՝ ինչպէս երբեմն բրաւ Փիլիպպոս: Տես թէ ի՞նչպէս մէկ հաւատաւորին հարցման տեղ Հոգին տուաւ անոր: Տէ՛ր, կ'ըսէ, կ'աղաչեմ քեզի, իրե՞ն համար է որ մարգարէն այս բանը կ'ըսէ՝ թէ ուրիշ մէկին համար: Եյս ուղիղ հարցումը դուռ մը եղաւ՝ ուսկից ներս մտաւ ներքինին մէջ Հոգին, և տեղ պատրաստեց Փիլիպպոսի խօսքերուն, մինչ ջուրին քով կ'երթար, որ պահուն Հոգին իբր ուսուցիչ մը ներքինին վրայ իջնելով, աւելորդ սեպեց ալիւս յոգնեցնել զՓիլիպպոս: Լե՛ս այսպիսի կերպով Հոգին Սուրբ կը պաշտպանէ զաշխարհ, և այսպէս կը մխիթարէ ոն զմարդիկ: Ո՛չ եթովպացւոյն մէջ խտր կը դնէ, ո՛չ հեթանոսները կ'անարգէ, ո՛չ ալ հրեաները աւելի կը պատուէ, ամէնուն հաւատարմայէս կը պարգեւէ իր շնորհները: Միայն՝ իբր նիւթ իր շնորհաց, կը փափաքի որ մենք սրտափոյթ հաւատանք: Եւ իսկոյն ճառագայթելով իր զանազան շնորհաց ջահերը՝ անոնցմով կ'ողորդէ եկեղեցւոյ զաւակները: Եւ իր շնորհներով փափայելով զանոնք՝ կ'անջատէ աշխարհային հեշտալիր զբաղումներէն ու կը քաշէ դէպի Հօր սէրը: Զի, Հոգին նշաններն ու լեզուախօսութիւնը կու տայ՝ իբր տղայոց խաղալիք. բժշկութեան շնորհքը, և հրաշից օգնութիւնը իբր կաթ մանուկներու, իսկ չափահասներուն կը մատակարարէ հաստատուն կերակուր՝ որ Աստուծոյ սէրն է: Ինչպէս կ'աղաղակէ ճաշակողը. Եթէ ես մարգարէութեան ոգին ունենամ, և ամէնազգի գիտութիւն, և հաւատք՝ լեռները տեղափոխելու, բայց սէր չունենամ՝ օգուտ մը չըլլար ինծի: Նոյնը աշակերտներուն ալ կը մաղթէ երբ կ'ըսէ, կ'աղօթեմ ու ծնրադիր կը պաղատիմ որ դուք ո՛չ թէ հրաշագործութեան Հոգին ընդունիք՝ այլ իմաստութեան Հոգին, որ ձեր սրտին աչքերը կը լուսաւորէ Քրիստոսի սիրոյն ծաւալն ու սարածութիւնը, բարձրութիւնն ու խորութիւնը իմանալու համար: Այս պատճառաւ՝ ահա, Հոգին նուազ կերպով բաշխեց հրաշից ու լեզուներու պարգեւը իբր անօգուտ բան մը. մինչ իմաստութեան ու հանճարի Հոգին միշտ կը ներգործէ եկեղեցւոյ մէջ, ու Քրիստոսի սէրը կը թափանցէ անոր որդեոց սրտերուն մէջ: Մէկ մը թող չկարծէ թէ պիտի կարենայ Տէր անուանել զՅիսուս՝ եթէ նախ անոր շնորհաց աղբեցութիւնը չընդունի: Իսկ թէ որ մէկ մը սուսնց անոր հրամանին հրաւերովը յառաջ անցնի՝ Սուրբ Հոգին փորձող կախարդ Սիմոնին նման պիտի դուրս նետուի այս տաճարին գուլիթէն: Ամուր կ'իք մը կայ դրուած Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն իւրաքանչիւր անդամին վրայ, որով անոնք պնդօրէն կը պատասպարօւին իրենց տրուած շնորհաց պատուոյն մէջ: Ինչու

որ, Աստուած որ մեզ ալ ձեզ հետ միասին հաստատեց ի Քրիստոս, տուաւ նաեւ Սուրբ Հոգւոյն առ հաւատչեայն մեր սրտերուն մէջ ու կընքեց մեզ: Ասի ուսուցիչ մըն է որ կը սովորեցնէ ու կը յիշեցնէ մեզ ինչ որ ըսած էր Քրիստոս, ինչպէս խոստացաւ ըսելով թէ, երբ գոյ ան՝ ճշմարտութեան Հոգին, ձեզ առաջնորդ պիտի ըլլայ կատարեալ ճշմարտութեամբ: Իմաստուն ճարտարապետ մըն է ան, որ առաքելոյ հիման վրայ կը շինէ օտարներն ու պանդուխտները՝ Քրիստոսի կատարելութեան աստիճանին բարձրացնելու համար: Յորդառատ գետ մըն է մարդկային միաբերը ոռոգող, որ մեր մտաց աղօսները կը թրջէ ու կը զուարթացնէ իր ցօղով պէս պէս բոյսերը առաքինութեան ծաղիկներուն: Ինչպէս ըսաւ Քրիստոս. Գետ մը պիտի բղխի Հոգւոյն զօրութեամբ իր հաւատացեալներուն որովայնէն. մարգարէին կանխաւ ըրած գուշակութեանց համաձայն: Արթուն վերակացու մըն է ան, որ կը կազմակերպէ եկեղեցւոյ կարգերն ու կ'որոշէ մէն մի աստիճաններն ու պատիւները: Որնոր, նախ դրաւ առաքեալները, երկրորդ մարգարէները, երրորդ վարդապետները, որոնց հետ հրաշքներն ու բժշկութեան շնորհքները, զանազան լեզուներ խօսելու կամ թարգմանելու պարգեւները:

Այս ներգործող Հոգին՝ երկնաւորներու դասակարգութեան համաձայն կը կարգաւորէ տաճարին աստիճանները, հոգեւոր երգերով Աստուծոյ հետ խօսակցելով միշտ: Այս Հոգին Սրբազան աւագանին մէջէն Քրիստոսի եկեղեցւոյն մանուկներ կը ծնանի երկնաւոր Հօր որդեգիր: Այս Ս. Հոգին կը զօրացնէ քահանայապետներու ձեռքերը շնորհներ բաշխելու համար. քահանաներունը՝ նուիրագործելու համար. սարկաւազներունը՝ սուրբ եկեղեցւոյ սպասարկութեան համար: Ասի ժառանգներ կը յարուցանէ եկեղեցական պատուոյ աթոռոյն: Ոմանք կը սահմանէ քրոջութեան պաշտօնին, ուրիշները՝ երգեցողութեան, մէկ մասն ալ սուրբ գրոց ընթերցողութեան: Ասով վկաններ զօրացան, նահատակները գինուեցան, կիներ արիացան, այրերը՝ քաջացան: Ասոր զօրութիւնը կը բղխէ խաչանիչ փայտերէն սքանչելիքներով. կառուցուած տաճարներէն՝ հրաշքներով, սուրբերու ոսկրերէն՝ հիւանդութեանց ու ցաւերու բժշկութեան շնորհքովը: Երկիրս ամբողջ լիք է ասոր ողորմութեամբը, և օղբ մաքրուեցաւ ասոր իջնելովը: Միշտ մեզ հետ է ան, և ինչ որ մենք ունինք՝ ասոր շնորհածիր պարգեւն է: Ուստի, ասոր առջեւ ինկած մեր երեսներուն վրայ սապէս մաղթենք:

Ո՛վ Պօլ Աստուած՝ Աստուծմէ, ու նորոգիչ ամէն բանի, Սուրբ Հոգի, քու խնամոցդ պահպանութեան յանձնեց իր հօտը Քաջ Հովիւր, ու քու ճառագայթդ սփռեց ան իր եկեղեցւոյն վրայ յաւիտեան: Պօլ շնորհիւդ կը շարժին մեր լեզուները օրհնութեան զո՛ր մատուցանելու համար, ու քեզմով մենք կ'արգուեցանք քու պաշտամանդ զանազան շնորհաց սպասարկելու համար: Քեզ կ'աղաչենք մենք ամէնքս միարան,

և համարձակ կը խօսինք քեզի հետ մենք՝ որ քու երկունքով ծնած որդիներդ ենք։ Մի՛ գարշիր քու հօտէդ մեր զազիր մեղաց պժղալի բուրումներուն համար, ու մի՛ արտմիր մեր անպարկեշտ լեզուին արտաբերումներէն։ Այլ մեզ հետ եղիր բարեացակամ կերպիւ մինչև վերջը, և ուղեկցէ՛ մեզի քու երկնային խորաններդ։ Ո՛վ Տէ՛ր, պաշտպանէ նաև թշնամի նետերու հարուածներուն դէմ մեզ՝ որ աքսորուած ենք այս նոթեհ հրկրին մէջ։ Մենք այժ չունինք պատերազմի ասպարէզը՝ նետուելու, ուստի, պաղատողին կը խնդրենք որ չենթարկես մեզ դարանակալ ոսոխին փորձութեանցը։ Տո՛ւր մեզ, ծարաւէն լլկուած հոգիներու, քու այն արեցուցիչ սիրտդ զինիէն՝ զոր մառուակեցիր այսօր սուրբ վերնատան մէջ, որպէս զի մխիթարուինք մեր այս թաղծալից օթեւանին մէջ, և հանդերձեալ կենաց յոստով պարարենք վստահ։ Ո՛վ, բարերար Սուրբ Հոգի, քաղցրութեամբ հոտոտէ նաև այս նուէրը՝ զոր իբր անուշաբոյր օրհնութիւն քեզ կը ձօնենք քու շնորհիւ, ո՛վ Աստուած իմ, Հոգի հեզութեան։ Եւ այսպէս միայն օրհնութիւններ կը վերառաքենք քեզ երկինք ինչպէս նաև Հօր ու Որդւոյ ցլտխճան, ամէն։



Ծ Յ Ո Ւ Յ

ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՌՆ

ՍԻՐՈՅ ԶՈՅ

Փակուած լռիկ՝ տապանակին մէջ միմակ
Մահւան մ'անցում ու խախտւի,
Դառն տապալով հեծես, խօսիս շարունակ
Անսիրտ մարդկանց, հետ ու խուլ։

Գիտեր լուռ մըթութեան մէջ զխրալի,
Հոն կը սպասես անձանձիւ,
Հոն մահնըւած սիրով ցոյց տաս աշխարհի
Սիրքդ խոցուած վրէժալի։

Ու կը հեծես լրժուած, թողուած թաղծագին.

—Այլես, աւա՛ղ, չեմ սիրուած—

Եւ արձագանգ լոկ ամայի մասուոյին

Կը կրկնէ,—ո՛հ, չեմ սիրուած:

Եւ յարասեւ պըլպըլացող կանթեղին

Լոյսը աղօս՝ երեւուն

Հոգեվարքի վերջին շունչով խօլ դեղին

Նրբոյլ կու տայ որմերուն:

Լրժուած է հոն . . . հոն կը հեծէ վրժազեղ

Տիեզերքի Տէրն Անհուն.

Խուլ են մարդի՛կ . . . միայն անխօս վառ կանթեղ

Հոն կը սպասէ միշտ անհուն:

Այդ մրժսակէզ լոյսին նըման, ո՛վ Յիսուս,

Սրբիս կանթեղ բոցավառ.

Թո՛ղ քու լրժուած առջեւ սրբիդ սիրայոյ՜

Թո՛ղ ըսպառի անդադար:

Եւ այդ խոցուած շուրջը սրբիդ բոցերուն

Ձերդ թիթեռնիկ սիրահար,

Դառնամ ես միշտ, այրած կիզած ես համբուն

Թո՛ղ սիրոյդ զոհ ըլլամ յար.

Եւ փոխարէն չար մարդկային ո՛հ անվերջ,

Պիղծ սրբերու մասնութեան,

Զոհուիմ թո՛ղ ես, ես միշտ թաղուած սրբիդ մէջ

Քուկըդ լլլամ յաւիտեան:

ԴՈՂԹՆՈՒՆԻ



ՊՐԱԶԻԼԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

ՄԻԻԹԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆ

Ա.Ն. Եպիսկոպոսուն Բորգուկալի

Կաթողիկէ Հարաւային Ամերիկայի ամենամեծ Հանրապետութեան նուիրապետութիւնը, որ սիրոյ և ազգակցութեան հին կապերով կապուած է Բորգուկալի հետ, այս երկրիս մէջ սիրող խիստ հալածանաց համար իւր զգացած ցաւն յայտնելու և անոր հովիւներն ու հաւատացեալները սփոփելու փափակ մտածութեամբ, հանրագրութիւն մը ուղղած են անոնց, որոյ գլխաւոր մասերը կը դնենք ի ստորեւ, նաեւ ի միջմարութիւն մեր համայնքին:

«Ս. Խաչի երկիրը՝ «ամենամեծ ու ամենաօգտակար ստեղծագործութիւնը երկրագիւտ ժողովրդեան», չկրնար անտարբեր մնալ ճակատագրին այն մեծ ազգին, որուն տուալին թագաւորը Խաչով Վահան չինաց իրեն և հինգ վահանով խաչ կազմեց, ցոյց տալով որ ինք պիտի պաշտպանէր զխաչ և պիտի պաշտպանուէր խաչէն:

«Մենք Բորգուկալի կը պարտինք մեր խօսած գեղեցիկ լեզուին հետ, Կաթողիկէ հաւատոյ անգնահատելի գանձը:

«Փրկագործութեան հովանւոյն ներքեւ, «վաղեմի ժամանակներու մէջ երբ քաղաւորութեան հաւար գաղտնիքի մը ստացումը հունանիչ եր Բրիտանի հաւար ընտանիք մը շահելու», մեր նախնիք Բորգուկէզ լեզուին տարրներուն հետ ի միասին սորվեցան քրիստոնէական վարդապետութեան ազգաբնոյթը:

«Եւ կրօնքն ու լեզուն, ինչպէս կ'ըսէ Էրգոլանոյ, երկու պղնձեայ շղթաներ են որ դարերու ընթացքին մէջ իրարու կը զօգեն անցեալ սերունդները ներկաներուն հետ, և այս կապերը որ դարուց ի դարս կը շարունակուին, կը կազմեն հայրենիքը սրբանուէր:

«Այս պատճառաւ ամէն իրաւամբ կը պարտինք մենք Բորգուկալի փառքերով՝ իբրեւ մերը, և իբրեւ մեր կ'ողբանք անոր ազգաները:

«Նոյն իսկ եթէ այս մեր զգացումները այսպէս դրաւորապէս յայտնէինք, անշուշտ դուք չպիտի տարակուսէիք մեր սրտից զգացմանց վրայ, այսու հանդերձ չէ այլ եւս օրէն մեզ լռութիւն պահել այսքան ցաւառիթ չարեաց առջև, այն համակրելի ազգին հանդէպ որ, ինչպէս ըսաւ Պիոս Ժ., «իրը վաղեմի փառք ունի Եկեղեցւոյ անխախտ հաւատարմութիւնը:»

«Այն քաղցրութիւնն ու զօրութիւնը որով Բորգուկալի եռանդնալից և իմաստուն նուիրապետութիւնը, առաջնորդ ունենալով իւր Պատրիարքը, պաշտպանեց Եկեղեցւոյ առաթուր կոխուած իրաւունքները:

այն հանդիսաւոր յայտարարութիւնը՝ խօսքով ու գործով, իւր կատարեալ ու անպայման հնազանդութեան առ Գերագոյն Հովուապետն, այն համբերութիւնն ու երկայնմտութիւնը որով հանդուրժեց կրեց թշնամանք, զրպարտութիւններ, ամբարիշտ դատավճիռներ և անիրաւ աքսորք, իրենք զիրենք պատուուած համարելով՝ Յիսուսի Բրիստոսի անուան համար նեղութիւններու արժանի ըլլալուն համար, ասոնք բոլոր չիտութեան և բարի օրինակի զարմանալի տեսարան մըն են պարզուած սուտջի աչաց ո՛չ միայն քրիստոնեաներու, այլ նոյն իսկ անաւաններուն:

«Ամենազնիւ օրինակն զոր կու տայ աշխարհի Բորդուկալցի նուիրապետութիւնը, արժանի՝ քրիստոնէութեան առաջին դարերուն, կը միտիթարէ, ո՛վ Արհի. Հարք, մեծահոգի Պիոս Ժ. ի հայրական սիրտը, ինչպէս ինք իսկ կ'ըսէ, և կը քաջալերէ կը սրտապնդէ ընդ համօրէն աշխարհ սփռուած Հովիւներն ու հաւատացեալները:

«Թոյլ տուէք մեզ, Արհի. Հարք, որ ի տրիտուր փոխարինի այդ ազնուագոյն օրինակին զոր կու տայ մեզ Բորդուկալցի նուիրապետութիւնը, մենք ալ, Արքեպիսկոպոսունք և Եպիսկոպոսունք Պրազիլիոյ, մատուցանենք Ձեզ մեր խիստ և անվեհեր բողոքը զոր կը բառնանք այն հալածանաց դէմ զոր կը կրէ Եկեղեցին ի Բորդուկալ, և այդ դիւցազնական պայքարողներուն կը հաւաստենք մեր անդադար և սրտագին ազօթից օժանդակութիւնը, յուսալից՝ թէ Աստուած ամենաբարին պիտի ցոլացնէ լուսագոյն օրեր այն Ազգին որ սուլաւ Բրիստոսի այնքան թաւաւորութիւններ որքան ինքն աշխարհակալեց:»

ԱՄԱՍԻՈՅ ԵՒ ՄԱՐԶՈՒԱՆՈՒ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵԱՅԷ

Մեր անցեալ բոլորն մեզ հրասարակեցինք Մարգուանու Հայ Կաթողիկէ ժողովրդեան պատճառաւ և յարգալիտ վերաբերումը իր նորոնսիտ Եպիսկոպոսին հանդէպ. Ուրախ ենք անոնց բարի բարի զգացումներն արտայայտող ուղերձները հրասարակելով այսօր. և կը մաղթենք որ իրենք շարունակեն իրենց այս գովելի զգացման և բնութեան մէջ և նոյն բնական և միւս բնական հակառակողներուն ալ բարի օրինակ հանդիսացած ըլլան:

ԱՌ ԱՐԶԻ. ՆԱԶԼԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մատուցուած Գրոյն Պատճէճը

Արհիպատիւ Գերապայծառ Հա՛յր

Յաւօք սրտի լրագիրներու մէջ կը կարդանք և կը տեղեկանանք թէ մեր հոգեւոր հովիւը՝ Գերբրջանիկ Կաթողիկոս Թերզեան հասարա-

կութեանս մէջէն կարգ մը անխիղճ անձանց կողմանէ զանազան տառապանքներ կը կրէ կաթողիկէ հասարակութեանս սոսկ բարոյական և նիւթական սիրոյն և շահուն համար . վասն որոյ առ ի քաջալերութիւն մեր խոնարհ և որդիական շնորհակալութիւնները կը մատուցանենք յոսս նորին Գերերջանիկ Տէրութեան :

Բողոք կը բառնանք նաև , մենք Կաթողիկէ Եկեղեցւոյ հարազատ և հպատակ որդիքս՝ սոյն անվայել ընթացքին դէմ և հրապարակաւ կը յայտարարենք թէ պատիւ ու պարծանք կը համարինք մեզ և կը ճանչնանք և պիտի ճանչնանք թէ Ամենապատիւ Թերզեան Կաթողիկոսը , Կաթողիկէ հասարակութեան ի վաղուց բաղձացեալ Պետն է Հռովմէ հաստատուած և վաւերացուած :

Ուստի , Արհիպատիւ Գերապայծառ Հայր , կը խնդրենք Ձերդ Արհիպատիւ Տէրութենէ որ բարեհաճէր մեր խոնարհ և որդիական հպատակութեան զգացումները հաղորդել մեր Սիրելի Հոգեւոր Տիրոջ , որոյ զօրավիգն բլլայ ամենակարողն Աստուած :

Բարեհաճեցէք նաև հայցել նորին Հայրապետական Ս . Օրհնութիւնը Ամասիոյ Հասարակութեան համար , ընդ որում շնորհել նաև Ձերդ Արհիպատիւ Տէրութեան Օրհնութիւնը :

Մատչելով ի համբոյր Սուրբ մատանւոյդ

Եմք և մեամք խոնարհ որդիքդ

(կը հեծելին երեսուն եւ ինն սորազրութիւնք)

Մարգուստոս Հայ Կաթողիկէ հաւատացեալ ժողովուրդը հեծեալ ուղիւնք դրած է Ամենայ . Կաթողիկոսին .

Ամենապատիւ Գերերջ . Հոգեւոր Տէր ,

Ամենահաւատարիմ որդիք Ձեր Մարդուանու Հայ Կաթողիկէ կղերն և ժողովուրդ նուիրական ու սիրելի պարտքն ունի յայտնելու անսպառ շնորհակալութիւններ Ձեր Գերերջանկութեան Հայրազորով ջանքերուն համար , որոնց շնորհիւ վերջերս ստացանք մեր ամենասիրելի Հովիւն զԱրհի . զՏէր Յովհաննէս Եպիսկոպոս Նազլեան , և զոր մեր մէջ վայելելու երջանկութիւնն ունինք իր աննման գործմանօք :

Արդ , Գերերջանիկ Հոգեւոր Տէր , այսպիսի շնորհաբաշխ արդիւնքի մը , զոր Ձեր Հայրազուրթ խնամոցն եւեթ կը պարտինք , թէպէտ աւարժան գանձուած բլլանք , սակայն մեր որդիական պարտուց հլու հպատակութեան անկեղծ հաւատարմ հաճեցէք ընդունել և մեք մատչելով ի

Համբոյր Ս. Աջոյդ և խնդրելով զԱստուածիւր օրհնութիւն Ձեր կը մնամք
ցփշտ

Ամենապատիւ և Գերերջանիկ Հոգեւոր Տեառնդ
ամենահլու և ամենախոնարհ որդիք .

(Կը հետեւին եօթանասուն եօթը usոռագրութիւնք)

Մարզուան 6 Մայիս (Ն . Տ .) 1912

Սրբազան Բանանայապետ Պիոս Ժ.ի ուղղուած գրին պատճենն Ե հետեւեալը .

Սրբազան Հայր ,

Մենք Մարզուանու Հայ Կաթողիկէ կղեր և Ժողովուրդ վերջին
ծայր զգածուած Ձեր այն Հայրական և գորովալից հոգէն որով Ձեր
Սրբութիւնն հաճեցաւ զԱմենաարժանաւոր Հովիւն Յովն . Եպիսկոպոս
Նազլեանն ուղղակի մեզ վիճակաւոր կարգելու անմասն շնորհքն ընել, կը
խոնարհենք մեր որդիական և ամենասրտագին շնորհակալիքը յոտո Ձեր
Սրբութեան և խնդրելով Նորին Ս . և առաքելական օրհնութիւնը կը
մնամք ցփշտ Ձեր Սրբութեան :

Երախտապարտ ամենահլու և ամենահնազանդ որդիք

(Կը հետեւին եօթանասուն երեք usոռագրութիւնք)

Մէրդիֆուն 6 Մայիս 1912

ԱՆԿԻՐԻՈՅ Հ. Կ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

(Շար . եւ վերջ)

Իշպու Մատուռն ինչապիթնտա ուփածը պիւր գուտուր տանա
գալմը իսէ սէ , Մայիս 3/16 Համբարձում կիւնիւ Սէմահէթլու Եպիսկո-
պոսմը Պանապանեան Գրիգոր Գերապայծառ հազրէթլէրի անըն սէրու-
նինտէ իլք սէֆա օլարագ Սուրբ Պատարագ Գուրպանընը Գապրիս-
թանտա մէտֆուն պուլունան ումում մէրհումլէրին իսթիրահաթը բուը
իշին թագտիւ էյլէմիշլէր տիր : Շէօյլէ քի չէնտ կիւն էվլէլինտէն Գապ-
րիսթան Գոմիսիօնը Գերապայծառ հազրէթլէրին տավէթ էյլէտիքաէն
սօնրա , թէղքէրէլէր վէ 4 Բիլիսէլէրին գաբուլարընտա իլանլար իլէ
էհալիլի մէղքիւր մէրասիմին իճրասընտա հազըր պուլունմայա տավէթ
իթաիլի կիպի , Համբարձում սապահընը մուայեէն վաղթտա 4 Բիլիսէլէ-
րիմիլին Գամրանալարը պիրտէն վուրուլմազլա , թէքմիլ էհալի , հէր սը-
նըֆտան , հէր չաղտան ագըն ագըն Մէղարըղա սօղբու շիթապան օլ-


մուշլար, թէքմիլ կղեր վէ Բիլիսէլէրին դարաց դասլարը, մէքթէպլէր չօծուգլարը, մէքլիսի իտարէ ազալարը թէքմիլ կէլտիքլէրի կիպի, Ալա-
թուրքա սա'աթ 3 1/2 տա Գերապայծառ Հազրէթլէրինին արապասը տա
կէլմիշ, վէ Գերապայծառ Հազրէթլէրի Մատուռը օրհնել էյլէտիքտէն
սօնրա ընթերակայ վարդապետլէրտէն չիթի սարկաւագլարտան, սպասա-
ւորլարտան իհաթէ օլարագ, ազիմ զիյնէթլէ թիւ պատարագ սէօյլէմիշլէր
վէ խիթամընտա, թափոր թէշքիլ օլմուշ վէ Գապրիսթանտա քէմիքլէրի
մահֆուզ ումում էօլմիւշլէր իշին Հանգստեան պաշտօն պաշլանըպ իքի
հիշէթլէրի խընճախընճ էհալի իլէ տօլմուշ օլան ալէլէրտէն կէշէր իքէն
օրհնեալ սու սաչարագ կիւզէրկիհաւտա պուլունան մէզարլարը օրհնել էթ-
միշէր, վէ թափոր թէքրաքէն Մատուռն էօնիւնտէքի մէյտանլըզա եւ-
թիշտիքտէ օրատա Հանգստեան Աւետարան օգունտըզտան սօնրա, Գե-
րապայծառ Հազրէթլէրի չու լէքֆէն կէօնտէրտիլիմ պէլիղ վէ միւէսսիր
նուլթըր իյրատ իթմիշլէր տիր: Իշպու մէրասիմտէ հազրը պուլընան էհա-
լինին սոյքըր 3,000ի միւթէճավուզ օլմուշ տուր: Մէրասիմին խիթամըն-
տա Գօմիսիօն ազալարը վարդապետլէր Գապրիսթան գարուսընտա էհա-
լիյէ խաչ էօփաիւրտիւքլէրի կիպի, աշխարհական ազալար տա (Գոսապ-
եան ըրֆ. Յակոբ էֆ. միւսթէֆի Սէյեհան Մ. Բիւրին հէրինէ Գօմի-
սիօն ազասը օլմուշլար տըր), թապագ թուլմուշլար, վէ պու թապաղըն
հասլաթը էփէիքէ միւհիմ պիր մէպլագ թէշքիլ իթմիշ տիր:
Թէքմիլ էհալի չու միւէլլիմ մէրասիմտէն դայէթլէ միւթէէսսիր ֆա-
գաթ ֆէվզէլատէ մէմնուն պիր հալտէ խանէլէրինէ ալտէթ էյլէմիշլէր
տիր:

Զիյրտէ Սէմ. Եպիսկոպոսուն մէզքիւր նուլթընը տէրճ իտէրիմ:

Մ Է Օ Ն Թ Ե Ր Է Մ Խ Ր Ի Ս Թ Ի Յ Ա Ն Լ Ա Ր

Պոլսան 16 սենեկ մուզասսեկ խաւապա, վերանկէք, քերիջանկէք
հալինեկ պրազըպ կիթմիշ օյսուդում, գապրիսթան նաւընա պիլէ նալայըզ.
Փազար ֆիլիյէն վի հիսսեկ եկեանեկ գապրիսթանըզ պուլունան շու մու-
զասսեկ մահէյսէ, պու կիւն իյֆ սեֆա օլարագ Սուրբ Պասարագ Գոարպա-
նընը քագսիս իքմէֆ շէրեֆ վի քեւէլլիսինեկ նայիլիքիսինեկ սօլայը ֆենիսի
հազիգեքէկ պախթիյար աւս իսերիմ: Ապ ու հնաստընըզ, մեօհքերեկ քեհր-
շիլիսիզ, հիկերիսիւր պիւրասեր վի հեւշիւրեկիլիսիզ, նեվհիլան սեղիզանը-
լարընըզ կիւնահարզ մահաուլարընըզ, հեզարե քեւիլիզգե Գաթօլիլիլին
իւնսապ կիւնիսինեկ պիւրու հնէլէ գուրպան կիթմիշ օլան պուննա սեվիլի-
լիլիլիլիլիլի մուզասսեկ պազապարըն, միւշերեք ֆեմիլիլիլիլի հըզգ էյի-
յէն, օ հիւսապըզ մեհիւմլարըն քեւիլիլիլիլիլի շէյլէ սեօլիլիլիլի միւթէէֆֆիւ
շու գըլեքիլ քօփրագլարըն իւզերիլեկ պասըպ, օնլարըն իսթիւսապը ռուհ-

հումանոզի կէշէ պիտի ոյջողը քարխփեան միւսքաղնի տիւ, քաղաք հեր պիտի քերտին փեք ճիւղի պիտի խանէսի, վե օ սա դայեք սեմնունիյեք սուն տերեւեկ խաքի վե արգու իյե վերտիյի խանէյեր օ եփեյիճե միւսիմն մեպաղը քեշ-
փիլ իքմիլ ոյջողընը մեմնունիյեքի ազիմե իյե իյիտիպ միւսքեպիլի ոյջուն.
հիյ զանն երեւմ ֆի ֆիսեկ վերտիյի խանէյի անընըլ ոյջուն. հիյ զանն եր-
մեւ ֆի ֆիսեւեկին վերտիյի խանէ իյեմի ազաարըլ, եյիմի սարալըլ ոյջուն :
Իմսի պու կիւնի ալըրմա սիգե քալիյիւմ վե տեւաւ շու տը ֆի կերեք մա-
տուտումոզսա, կերեք Գապիսքանըլըլըլ պալզա ճիւնքիտիմն մաքեմաւ
գալան պալը գուտուրարըլըլ իմալի իյիմ ուքաճըլ պիտի քեւսեւարըլըլ-
ըլըլ սահա տիւղ երեւիլն. պեւ սիգի քեւմիմն ետեյիմ ֆի շու մոգսանըլըլ
իմալ ոյջուն կեօրմեքե հըսա իտեւեյիմիլ մեքերրեք պու կիւնի իտեւեյիմիլ
քեւսեւարըլըլըլ պիտի գաք սահա գիյսեք ոյջունըլ տը. վե եքսիյիմիլ խա-
նէյիմն իւմեքիմն դանի դանիմե Ալլահսան արաւալըլըլ սեվկիլի մե-
հումարըլըլըլ միւսեպիտ շեքապըլըլ. պու միյեք շիմսի ճիւնքիմիլ իւգե-
րիմն, ալիյիմիլ, քեշեպիւսալըլըլ վե հեր մեվ մեւալիմիլ իւգերիմն ե
քեպերրիմեքըլ տանմանիյի տալեք իտեւեյիմն Օրհնալիմն Ամնալիյիմն Հօր եւն.



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Վ Մ

Մեյիս 17ին Սըրտղան Գահանայապետն ունկնդրութեան ընդունեցաւ վաթսուն
ուխտուորաց պատուիրակութիւն մը որ կազար Ամերիկայի Միացեալ Նահանգներու Բոր-
թոյ Ռիքոյ վիճակէն, աւթիւ չորեքհարիւրամեայ հաստատութեան այն թեմին որ առա-
ջինն եղաւ հիմնուելու Հիւսիսային Ամերիկայի թեմերուն: Նոյն վիճակին եպիսկոպոս Գեր-
ձօնա, և Հռովմայ Ամերիկեան դպրոցին մեծաւոր եպս. Բէննէտի ներկայ էին Եպս. ճառ
մը խօսեցաւ, բոլոր թեմականներուն ջերմեանդն զգացումները յայտնելով Սըրտղան Հօր,
և շեշտելով կրօնական ազատութիւնը զոր կը վայելէին Ձեր զաւակներն, ըստ, աւելոյ-
դող են Պետրոսի Աթոռէն իրենց ուսուցում ճառատալեաց մէջ, յարգալիք կը վերա-
բերուին Ձեր հրամաններուն և խորհուրդներուն, կ'ուրախանան Ձեր ուրախութեան և կու-
լան Ձեր արտասուօք. և կը ներկայացնեն Ձեր առջեւ ամբողջ Հիւսիսային Ամերիկայի
կաթողիկէայ Ձեր զաւակները. և ճշմարտութեան այս Աթոռոյն և Ձեր Սըրտութեան լիա-
կատար յարումին կը դաւանին Սըրտղան Հայրը շնորհակալութիւն յայտնելով օրհնեց զի-
րենք մեծաւ ցնծութեամբ: Եպս. իւր վիճակին դրամական ընծայն եւս մատուց Նորին
Սըրտութեան:

* Հաւնգարացի ուխտաւորներ ալ ընդունուեցան, չորս հարիւր յիսուն թուով և
Բէշի կամ Հինգ եկեղեցեաց վիճակին Եպս. Գեր. Ձիլիլի առաջնորդութեամբ: Ասոնց մէջ
կային ազնւապարճ երեւելի տնձեր, Տօղթ. Ծէմպէրի, Հինտրի, կալա զարդարուն զգեստ-
ներով և ուրիշ շատեր. Գեր. Պութիլըլայ, նշանաւոր քարոզիչ ի Պուստրէլթ. քանի մը
իշխաններ, կոմսեր, Եպիլ, զօրավար բանակին: Խօսուած գեղեցիկ ճառին մէջ ակնարկելով

արդի մոլորութեանց, հալածանաց, կը հետեւէր սա գեղեցիկ պարբերութիւնը. «ինչպէս » գործին արձանագրեցին Յիսուս Քրիստոսի յաղթանակները, այնպէս Յիսուս Քրիստոսի փոխա նարդին Աթուր, հակառակութեանց ու փոթորիկներուն մէջ, անպատճառ ի պարտութիւն պիտի մատնէ իր թշնամիները: Եւ պէտք չէ բնաւ զարմանալ ասոր վրայ. փոսն զի Ս. Պետ- րոսի Աթուրն վրայ կը թագաւորէ խաչեցելոյն ազգատոհմը, և հալածանքներն փաստացի կը ցուցնեն թէ Երեղեցին յիսուսի Հարսն է Յեսուսի Քրիստոսի. ինչպէս որ Գերագոյն Հովուին շարունակական ցաւերն ու դառնութիւնները կը հաւատեն թէ նա Ճշմարտապէս փոխանորդն է խաչեցելոյն Աստուծոյ: Բայց ինչպէս որ Փրկչին խոցուած ու բացուած Սրտէն վաղող արիւնը նշանակ եղաւ յաղթանակի, այսպէս ալ իր փոխանորդին վիշաւերն ու ցաւերը շնորհաց աղբիւր են մեզի համար: Կը պարծինք մենք Անոր Սրբազան Գահէն Հունգարիոյ զաւակներուն տեղացած անթիւ անհամար բարութիւններու համար:

Սրբազան Բահանայապետը իր պատասխանին մէջ շեշտեց թէ իր ցաւերը կ'ամբօքէին և իր հայրական սիրտը կը սփռէր իր Ճշմարիտ Կաթողիկէ զաւակաց այլաբան սերտ, ան- կեղծ և արտեւանդն վերաբերմամբ: Ի վեր հանեց Հունգարիոյ եկեղեցւոյն պարծանքները, անոր մեծամեծ Սուրբերը, արքայազուն սրբակեաց գիւցազուները, խորամտաւ հաւատքը և եղբայրսիրական հաստատութիւններուն անխնայ բարերարութիւնները: Օրհնեց արտագեղ օրհնութեամբ՝ Ս. Կուսին ընծայուած այս թագաւորութիւնը, մաղթելով ամէն բարիք անոր և իր առաքելական ծերունազարդ Արքային, Փրանկիսկոս Յովսէփայ:


* * Հետեւեալ հեռագիրը տեսնուեցաւ թերթերու վրայ.

ՀՌՈՒ, 2 Յունիս, — Այստեղ շատ կը պնդուի որ Յրանաւոյ մէջ Մամուլի պայքար մը կը մղուի, որուն ոյժ կուտան նաեւ իտալական թերթեր, հարկադրելու համար Ֆրան- սական կառավարութիւնն որ պաշտօնական բանակցութեան սկսի Վատիկանի հետ, Մա- րութի մէջ կրօնական խնդրոյն լուծման համար: Մէկ քանի թերթեր կ'ըսեն թէ ջերմ Կա- թոլիկէ և արքայական երեսփոխան Մ. տրնի Բաշէն պիտի անուանուի դեսպան Վատիկա- նի մօտ: Վատիկանի Արտաքին գործոց բարտաղարութիւնը շատ կ'ըջալովեք այս պայ- քարը:



ՀԱՅ ԿԱՅՂԻԿԵԱՅՔ

Գաղղիոյ տէրութեան կողմանէ Մարգուանի Երեւելիներէն Մեծ. Յովհաննէս ԷՖ. Մօմճեանի շնորհուած է *Palme Académiques* պատուանշանը: Մեր սրտագին շնոր- հաւորութիւնները:



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Հայաստանի Բարենորոգմանց Յանձնաժողովը ժամանակի մը համար եւս յետաձգած է իր ուղեւորութիւնը, մինչեւ որ գոնէ քուէարկուելիք վարկը Երեսփոխանական Ժողովէն նկատողութեան առնուի և քաղաքական շփոթ կայութիւնը պարզուի և կառավարութիւ- նը ներկայ դժուարութիւնները կատարելապէս հարթէ: Այս միջոցիս կարեւոր հրահանգներ տրուած են գաւառներու մէջ անդորրութիւնը պահպանելու և արդարութիւնը լիովին ի գլուխ հանելու համար:

Նոր գտնուած Հայ-Կիլիկիան հիմ դրամներ. — Սիսէն կը տեղեկացնեն թէ երբ Մա- յիս Գին Թուրքերու գերեզմաննոցին մէջ մեռել մը կը թաղէին, սափոր մը լեցուն 500 — 1000 հատ հայկական արծաթ դրամներ գտնուեցան, որոնցմէ ոմանց վրայ գրուած է «Լեւոն Թագաւոր Ամենայն Հայոց Կարողութեամբ Աստուծոյ, իսկ ուրիշներու վրայ ալ՝ «Լեւոն Թագաւոր Հայոց, Կարողութեամբ Աստուծոյ: Երկու տեսակ դրամներն ալ շատ մաքուր են: Կառավարութիւնը Մայիս 10էն ի վեր կը հետապնդէ դրամ գտնողները, մինչեւ

հիմա ձեռք անցած են 150էն աւելի դրամներ: Դրամը պարունակող ստփորի մասին կը պատմեն թէ՛ վրան Լեւոն Թագաւորին պատկերը սուրը և կարգ մըն ալ հայկական գրեր կան եղեր:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Օսմանեան երեսփոխանական ժողովը իր Մայիս 19ի գումարման մէջ բաւական յուզումնալից փնտրանքներ կատարեց հանրային հաւաքումներու օրինագծին ինչ ինչ նոր մուծուած արգելիչ մասերուն վրայ, ի յայտ բերելով պատգամաւորաց ոմանց կարծեալէն աւելի թափանցող և հաստատամիտ նկարագիրը, որ կոյրզկուրայն տեղի չպիտի տայ նոյն իսկ դահլիճին որ և իցէ առաջարկած բաներուն առջեւ, առանց զանոնք քննութեան քուրայէն խափառ անցունելու: Պատուաբեր և յաւատարմ է առայժմ այս հոգեկան տրամադրութիւնը Պատգամաւորական ժողովոյ: Օրէնսդիր Խորհրդարան մը պէտք է մտածէ օրինաց բերելիք ընդհանուր բարիքը և ոչ թէ միայն առժամեայ վաղանց մէկ օգուտը:

* * Իտալական նաւատորմը կղզիներու մէջ կը շրջի այսր անգր, մանր ցոյցեր ընելով: Յարձակեցաւ քանի մը նաւերու վրայ որոնք Սամոս կղզին պակսիմատ կը փոխադրէին. 93 ռումբ արձակել են: Այսու հանդերձ նաւերէն մէկը ազատեցաւ. երկուքը փնտառեցան, իսկ չորրորդին նաւադները լողալով ազատեցան, և բեռը, 95 պարկ պաքսիմատ, թշնամւոյն ձեռքն ինկաւ:

Իտալիոյ վարչապետ Մ. ձովիդի յայտարարեք է յէ, Իտալիոյ համբերութիւնը հատած ըլլալով, քիչ ատենէն պիտի հարկադրուի աւելի զօրաւոր հարուած մը աւալ:

* * Կ. Պոլսոյ Դերման հիւպատոսարանը, մինչեւ անցեալ շաբաթ երեկոյ հինգ հաւաք իտալացիներու անցագիր տուած է: Իտալացւոց վտարումը կը շարունակուի:

* * Դերման նոր դեսպան Պարոն Ֆոն Վանկէնհայմ կիրակի օր Պոլիս եկաւ:

* * Դեսպանախոհուրդը եւ սէրուքեանց միջեւ անհամաձայնութիւն. — Իգթիմալ ստոյգ աղբիւրէ կ'իմանայ թէ դեսպանախորհուրդին առարկայ ըլլալիք ինքիներու մասին համաձայնութիւն չէ գոյացել Եւրոպական Դահլիճներու միջեւ: Անգլիա ընդունելի չէ նկատած քանի մը տէրութեանց առաջարկութիւնը, որով դեսպանախորհուրդին ձեռնարկը չէ յաջողած:

* * Կրետացի երեսփոխանները որոնք ժամանած էին Աթէնք, յամառաբար կը պնդէին թէ պիտի մտնէն երեսփոխանական ժողովոյ մէջ, մինչդեռ վարչապետ Վէնիցելոս կ'ընդդիմանար, Եւրոպական կոնսուլութիւններ չժողովներու համար: Եւ անոնց հետ անսահեցութիւն մը ունենալով համագեց զիրենք ետ կենալու իրենց այս դիտաւարութենէն: Սակայն ապա լսուեցաւ թէ անոնք կրկին փոխել են իրենց միտքը և բացման օրը պիտի դան ի Խորհրդարան: Որու հետեւանօք զինուորական միջոցներու դիմուեցաւ: Շաբաթ օր ծովածաւալ մամբա մը անձկալից կերպով հաւաքուած էր հելլեն խորհրդարանին առջեւ: Բոլոր շրջականները զինուորական շղթայի տակ առնուած էին: Կրետացի երեսփոխանները խմբովին եկան Խորհրդարանին առջեւ: Զինուորական ջոկատ մը՝ հրաշ անը ուսերմուն՝ առնոց ծամբան կ'արգիլէին: Սպանները նետուեցան զինուորներուն և երեսփոխաններուն միջեւ, աղաչելով անոնց որ քաշուին: Թէ վնասուողները և թէ սպանները դառնապէս կուլային: Կրետացիները արշեցին պատուիրակութիւն մը զրկել Վէնիզելոսի մօտ՝ անոր հետ բանակցելու համար Խորհրդարանի նիստերուն դադարէն վերջ: Այս միջոցին Խորհրդարանը բացուած ըլլալով Մ. Վէնիզելոս, ձեռնարկեց դիւանին ընտրութեան: Զինուորներուն մէջ յուզումը գողգոլելով, անոնց մէկ մասը իրենց զօրանոցները դարձան Խորհրդարանը իր նիստերը դողբեցուց մինչեւ Հոկտեմբեր մէկ:

Հելլեն դահլիճին մէջ նախարարական յանկարծական տագնապ մը ծագեցաւ: Դաւտական նախարար Մ. Տիմիթրաքօբուլօ նախարարաց Խորհուրդին մէջ առաջարկեց որ Կրետացի երեսփոխանները ընդունուին, մերժելով այն յերիւրանքը թէ կրնայ սակից պատերազմ ծագիլ: Նախարարը թուեց այն պատճառները, որոնք կը հարկադրեն թէ՛ Թուր-

քիան, թէ՛ Յունաստանը և թէ՛ Եւրոպական տէրութիւնները որ կրեաական խնդիրը ընդ փոյթ լուծում մը գտնէ։ Մ. Վենիզելոս իր որոշման վրայ անխախտ մնաց, յիշեցնելով Յունաստանի ստունձնած յանձնառութիւնը Մեծ Տէրութեանց հանդէպ կրեաէն չգրաւելու համար։ Նախարարներու մեծամասնութիւնը Մ. Վենիզելոսի համակարծիք գտնուեցան։ Մ. Տիմիթրաքօբուլօ հրաժարեցաւ, որ հանրային կարծիքին վրայ շատ խոր տպաւորութիւն մը ըրաւ։ Մ. Վենիզելոս իր մօտ կանչելով Ոստիկանական վերատեսուէրը՝ հարկ եղած հրահանգները տուաւ, հանր. անդորրութիւնը անվթար պահելու համար։

~~~~~

#### ԱՆԱԽՈՐ ՀՐԴԵՂ Ի Կ. ՊՈԼԻՍ

Պոլսոյ պատմական ահաւելի հրդեհներուն չափ աղիտաբեր հրդեհ մը ծագեցաւ ըշ. օր Դատական նախարարութեան մօտակայ փողոցէ մը։ Հրդեհը տեւեց 1½ ժամ և այրեցան 2000ի չափ բնակարաններ, բազմաթիւ մզկիթներ, վարժարաններ և պահականոցներ։ 20ի չափ թաղեր հրոյ ճարակ եղան և մոխրակոյտի մը վերածուեցան։

Հրդեհը ծագեցաւ, առտուն ժամը 7ին (Ը. Ե.), Դատական նախարարութեան եւ տեւի Եէնի մահալլէ կոչուած թաղի Գըպլէ փողոցին մէջ, Կրթական նախարարութեան գրադարանի պաշտօնեաներէն Ֆէթհի պէյի սեփական նորաշէն տունէն։

Հրդեհը քանի մը ճիւղերու բաժնուեցաւ։ Առաջին անգամ Գապասագալ թաղը հրոյ ճարակ եղաւ և միեւնոյն պահուն հրդեհը դէպի Ախրըդաբու երկարեցաւ։

Չուրի նուազութեան և հովին սաստկութեան պատճառով, քանի մը ժամուան մէջ հետզհետէ իսակ փաշա, Սէյիտ Հասան, Ագ Պըեք, Նազը Պէնտ, Կիւն Կէօրմէզ, Կիրանի Էմանէթ, Իւչէր, Ֆէրուզ ազա թաղերը մոխրակոյտ դառնալէ ետք, հրդեհը սկսաւ յառաջանալ մէկ կողմէն դէպի Բիւշիւք Այա Սօֆիա, իսկ միւս կողմէն դէպի վար ծովեզերք երկաթուղիի գիծը։

Հրդեհը առտունէն մինչեւ իրիկուն շարունակելէ ետք, հազիւ կէս գիշերուան մօտ կարելի եղաւ Այա Սօֆիա թաղին բաղնիքին քով մարել, 2239 շէնք մոխիր դարձնելէ ետք։

Այլած թաղերը գրեթէ ամբողջովին թրքարնակ էին։ Հրկիզեալները աղէկատու տեւսարան մը կը պարզէին։ Անոնցմէ շատեր յանկարծակիի եկած էին իրենց հոգին ազատել և առնէն դուրս նետուիլ սմէն բան երեսի վրայ ձգելով։

— Երեկ ցորեկ Շահգատէ պաշը հրդեհ մը ծագեցաւ Ֆիլիպէցի Հասան Էֆ.ի խանութէն և այրեցաւ նոյն խանութն ու վրայի սենեակը։ Իսկ իրիկուն ժամը 8-ն մօտ թաւ թափա, Էնլի եօղաշու, Պէօյիւք Ագարճա, Փաաքալ փողոցը, Եօրկիատիսի տունէն հրդեհ ծագեցաւ և այրեցան 19 տուն և մէկ գինեւան։ Հրդեհը մարեցաւ տեղացի ժաղովուրդին ջանքերուն շնորհիւ։

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                            |     |
|--------------------------------------------|-----|
| Ներքողեան Ս. Ներսէսի Լամբրոնացոյ . . . . . | 273 |
| Սիրոյ զոհ . . . . .                        | 277 |
| Պրազիլիոյ Նպիսկոպոսաց նամակը . . . . .     | 279 |
| Նազլեան Նպս. եւ իւր թեմը . . . . .         | 280 |
| Աճեխիւրիոյ գերեզմանատունը . . . . .        | 282 |
| Տեղեկագրականք . . . . .                    | 285 |


ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿ



ՏԵՐՈՐԷՆ-ԻՄՐԱԿՐԱՊԵՏ  
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Փամանեան Գործակցական ԸՃԿ. Էպուստուոս նապէսի Նօ. 27







«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ», Հայ Կաթոլիկ Ի Պատրիարքարան  
պատշտական Շաբաթները, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը  
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր հօրէի բաղկացած եւ  
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին  
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառոտ-  
ուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց  
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերք կարդալու :

#### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան . . . . . Դիսեկ. արծ. 40

Վեցամսեայ . . . . . » » 20

Արտասահման

Տարեկան . . . . . Ֆրանկ 10

Վեցամսեայ . . . . . » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ  
կամ մէյ մէկ դր.նոց նամակադրոշմով :

#### Մէկ քիւ 1 Դահեկան

—\*—

Նամակ, յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթոլիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Péra

Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— շնորհակալութիւնք հրատարակուի շաբաթ օրերը:  
2.— Խմբագրութիւնն պատրաստեալ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ  
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:  
3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիր:  
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ  
կաղմը միայն:  
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնաւորուին